600.0479.18.12.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

18 դեկտեմբերի 2019 թվականի №479Ա

ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 1999 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 25-Ի №10 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 28-րդ, 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովի 1999 թվականի հունիսի 25-ի «Փոքր ՀԷԿ-երին գործունեության լիցենզիաներ տրամադրելու մասին» №10 որոշմամբ «ԿԱՊԱՆ-ԷՆԵՂԺԻ» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0023 լիցենզիայի պայմանների՝
   1) 6-րդ, 10-րդ և 12-րդ կետերում «Կայան» բառը բոլոր հոլովաձևերով փոխարինել «Կայաններ» բառով՝ համապատասխան հոլովաձևերով.
   2) 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. Կայաններում էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվում է բացառապես հետևյալ ագրեգատներով (սարքավորումներով)՝

1) 6600 կՎտ փաստացի տեղակայված (դրվածքային) հզորությամբ «Ողջի-2» փոքր հիդրոէլեկտրակայանում՝

ա. հիդրոտուրբին №1՝ Уралгидромаш РО 15 ГМ-84, 2500 կՎտ, 1952թ,

բ. գեներատոր №1՝ Свердловск ГС-170/64-8, 2500 կՎտ, 1951թ,

գ. հիդրոտուրբին №2՝ Уралгидромаш РО 15 ГМИ-84, 2500 կՎտ, 2006թ,

դ. գեներատոր №2 AVK, 2500 կՎտ, 2006թ.

ե. հիդրոտուրբին №3՝ Мос. Маш. завод, С 10 Т4 1600 կՎտ, 1929թ,

զ. գեներատոր №3՝ 1600 կՎտ, 1929թ:

2) 8700 կՎտ փաստացի տեղակայված (դրվածքային) հզորությամբ «Ողջի-3» փոքր հիդրոէլեկտրակայանում՝

ա. հիդրոտուրբին №1՝ Уралгидромаш РО 15 ГМ-84, 2500 կՎտ, 1952թ,

բ. գեներատոր №1՝ Свердловск ГС-170/64-8, 2500 կՎտ, 1951թ,

գ. հիդրոտուրբին №2՝ Уралгидромаш РО 15 ГМ-84, 2500 կՎտ, 1952թ,

դ. գեներատոր №2 Свердловск ГС-170/64-8, 2500 կՎտ, 1951թ,.

ե. հիդրոտուրբին №3՝ Уралгидромаш РО 15 ГМ-84, 2500 կՎտ, 1952թ,

զ. գեներատոր №3՝ Свердловск ГС-170/64-8, 2500 կՎտ, 1951թ,

է. հիդրոտուրբին №4՝ VEVEY-ORLECON, Pelton 01481/131179, 1200 կՎտ, 2001թ,

ը. գեներատոր №4՝ ORLECON, 1200 կՎտ, 2001թ:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ԿԱՊԱՆ-ԷՆԵՂԺԻ» փակ բաժնետիրական ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, իսկ նրա գործողությունը տարածվում է 2019 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- դեկտեմբերի 2019թ.